ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2020/80

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Բողոքաբեր՝ «Արքասիմ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Արքասիմ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Վ. Սիմոնյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/89» ծածկագրով գնանշման հարցում, կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Արքասիմ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 07.07.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ «ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՁԲ-20/89» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Արքասիմ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը համարել հրավերի պայմաններին համապատասխանող:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 07.07.2020թ.-ին:

07.07.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/80 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

15.07.2020թ.-ին և 24.07.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 15.07.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.07.2020թ.-ին:

2. «Արքասիմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Արքասիմ» ՍՊԸ-ն 07.07.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ սույն թվականի հունիսի 16-ին «Արքասիմ» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՁԲ-20/89 գնման ընթացակարգով մրցույթի 4-րդ չափաբաժնին և ներկայացրել է նվազագույն գնառաջարկ:

Սույն թվականի հուլիսի 2-ին մրցույթի հանձնաժողովի կողմից հրապարակվել է հայտարարություն համաձայն որի մրցույթում հաղթող է ճանաչվել ԱՁ Արինա Պողոսյանը, իսկ «Արքասիմ» ՍՊԸ ներկայացրած հայտը համարվել է որպես հրավերի պահանջներին չհամապատասխանող: Հեռախոսակապի միջոցով կապ եմ հաստատել հանձնաժողովի քարտուղարի հետ և տեղեկացել, որ ներկայացված հայտի նախահաշվում ներառված է եղել տող «Սարքավորումներ 0,1198%», որը ես ջնջել եմ հայտից, քանի որ այդ տողով ծախս չէի նախատեսում: Ինձ բանավոր տեղեկացրել են, որ պետք է այդ տողը պարտադիր ներառեի և ավելացների այդ տոկոսի չափով գումար: Այսինքն ես չեմ ցանկացել արհեստականորեն ծանրաբեռնել նախահաշիվը և ավելացնել աշխատանքների կատարման ծախսերը, մինչդեռ հանձնաժողովը գտել է, որ պարտավոր էի ավելի շատ ծախս նախատեսել: Արդյունքում ներկայացված հայտը համարվել է հրավերին անհամապատասխան և հաղթող է ճանաչվել շուրջ մեկ միլիոն դրամ ավել գումարով հայտ ներկայացյաւծ անձը:

Գտնում եմ, որ «Արքասիմ» ՍՊԸ-ի հայտը պետք է համարվի մրցույթին համապատասխանող, քանի որ նշված թերությունը որևէ կերպ չի ազդել որևէ պայմանի, գնի ավելացմասն և կամ այլ հանգամանքների վրա:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Արքասիմ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/89» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Արքասիմ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը համարել հրավերի պայմաններին համապատասխանող:

Ընկերությունը ներկայացված լրացուցիչ դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան ՀՀ ԿԳՄՍ նախարարության գնումների և հաշվապահական հաշվառման վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր քարտուղարի տեղակալի դիրքորոշման հայտնում եմ Ձեզ, որ կողմը հաստատել է այն մոտեցումը, որ «Սարքավորումներ 0,1198%» տողով նախատեսված աշխատանքների համար մեր կողմից գումար չնախատեսելը ընդունելի է և միաժամանակ փաստել է, որ իրենց կողմից առաջարկվել է տվյալ տողում նշել զրո: Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Սարքավորումներ 0,1198%» տողը նախատեսում է գումար, որը հաշվարկվում է նախորդ տողերում ձևավորված գումարների հանրագումարի 0,1198% չափով գումար: Այսինքն այդ տողում եթե մեր կողմից գրվեր զրո, կստացվեր, որ ծավալաթերթում կատարում ենք փոփոխություն, որը ինքնին չէր համապատասխանելու ծավալաթերթ-նախահաշվի սկզբնական տարբերակին:

Հարգելի պարոն Օհանյան, մրցույթային հանձնաժողովի կողմից ակնհայտորեն սխալ արձանագրություն է կազմվել, քանի որ իրենց իսկ դիրքորոշմամբ հայտնել են որ ընդունելի է ծավալաթերթում փոփոխություն կատարելը այն է 0,1198% սարքավորումների արժեքը գրել զրո, այն դեպքում, երբ 0,1198% հաշվարկվում է այլ տողերի գումարային արժեքների հանրագումարից տոկոսային հաշվարկմամբ և զրո գրելու դեպքում ծավալաթերթը ենթարկվում է փոփոխության: Միևնույն ժամանակ հանձնաժողովն անընդունելի է համարում հիշյալ տողը ջնջելը: Ընդ որում տեղին է նշել, այս ամենը մի հարցի վերաբերյալ, որը որևէ կերպ չի ազդում մեր կողմից ներկայացված ընդհանուր գնառաջարկի վրա, մինչդեռ այն էական ազդեցություն է ունեցել մրցույթի ընդհանուր արդյունքների վրա և ուղղակիորեն վնաս է պատճառում Հայաստանի Հանրապետությանը:

Գտնում եմ, որ բողոքը էլ ավելի է հիմնավորվել ներկայացված դիրքորոշմամբ և ենթակա է ամբողջությամբ բավարարման:»:

3. <u>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 07.07.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/10146-2020 գրությամբ դիմել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունին՝

հնարավորություն տալով «Արքասիմ» ՍՊԸ-ի կողմից 07.07.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 09.07.2020թ.-ի թիվ 04.1/31.2/17512-20 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 2020թ հուլիսի 7-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/10146-2020 գրության կից ներկայացնում եմ «Արքասիմ» ՍՊԸ-ի 07.07.2020թ ներկայացրած բողոքի վերաբերյալ պահանջվող փաստաթղթերը:

Միաժամանակ տեղեկացնում եմ Ձեզ, որ նախարարության կողմից 2020 թվականի հունիսի 16-ին գնանշման հարցման ընթացակարգով «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/89» ծածկագրով կազմակերպված կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների գնման գործընթացին 4-րդ չափաբաժնի համար հայտ է ներկայացրել «Արքասիմ» ՍՊԸ-ն: Հաշվի առնելով, որ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված չեն հրավերի պահանջներին համապատասխան՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատման գործընթացը կասեցվել է և 2020 թվականի հունիսի 24-ին առաջարկվել է «Արքասիմ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, մասնավորապես՝ ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվը լրացված չի եղել, ինչպես նաև հաստատված չի եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հավելված 1-ի և Հավելված 2-ի էլեկտրոնային ստորագրությունները տեսանելի չեն եղել: Մասնակցի կողմից շտկվել են էլեկտրոնային ստորագրությունները, իսկ ներկայացված լրացված ծավալաթերթ-նախահաշվից հանվել է նախագծա-նախահաշվային փաստաթղթերով պահանջվող «Սարքավորումներ-0,1198%» տողը:

Ինչ վերաբերում է մասնակցի ներկայացված դիմում-բողոքում նշված պնդմանը, որ «Սարքավորումներ-0.1198%» տողը իր կողմից ջնջվել է, քանի որ այդ տողով ծախս չի նախատեսել որպեսզի արհեստականորեն չծանրաբեռնի նախահաշիվը, ապա հարկ է նշել, որ մասնակիցը չպետք է ծավալաթերթից հեռացներ «Սարքավորումներ» տողը, քանի որ այն անհրաժեշտ է տվյալ նորոգման աշխատանքները կատարելու համար և մասնակիցը ընդամենը տողը նախատեսելով կարող էր գումար չնշել, կամ նշել 0.00 դրամ, որպեսզի պարզ լիներ, որ վերջինս օգտագործելու է նշված սարքավորումները, սակայն դրանց դիմաց գումար չի պահանջելու:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/80 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 08.06.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/89» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) թիվ 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով սահմանված 4-րդ չափաբաժնի համաձայն՝ մասնակիցները ծավալաթերթ-նախահաշվում պետք է նաև լրացնեն «Սարքավորումներ-0.1198%» տողը:

iii. Նույն հրավերի՝ 4.3-րդ կետ 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ շինարարական աշխատանքների գնման դեպքում, ներկայացնում է իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

iv. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, 4-րդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել նաև «Արքասիմ» ՍՊԸ-ն:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 16.06.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ «Արքասիմ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվը լրացված և հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ թիվ 1 և թիվ 2 հավելվածներում առկա էլեկտրոնային թվային ստորագրությունները տեսանելի չեն:

vi. Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը որոշել է կասեցնել գնման գործընթացը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vii. Նույն արձանագրության համաձայն՝ «Արքասիմ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները շտկել է մասնակի, ինչով պայմանավորված, Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

viii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից www.gnumner.am կայքում 02.07.2020թ.-ին հրապարակվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/89» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Արքասիմ» ՍՊԸ-ի կողմից 07.07.2020թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ ենթակետի (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված)

տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի 4.3-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման

բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում՝ Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 08.06.2020թ.-ին հայտարարված «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/89» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով՝ 4-րդ չափաբաժնի մասով պարտադիր պայման է նշվել, որ մասնակիցները ծավալաթերթ-նախահաշվում պետք է նաև լրացնեն «Սարքավորումներ-0.1198%» տողը:

Նույն հրավերի՝ 4.3-րդ կետ 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ շինարարական աշխատանքների գնման դեպքում, ներկայացնում է իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում, կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Հանձնաժողովի 16.06.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ «Արքասիմ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվը լրացված և հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ թիվ 1 և թիվ 2 հավելվածներում առկա էլեկտրոնային թվային ստորագրությունները տեսանելի չեն, ինչով պայմանավորված Հանձնաժողովը կասեցրել է գնման գործընթացը և առաջարկել է Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սակայն «Արքասիմ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները շտկել է մասնակի, ինչով պայմանավորված, Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա մասնակիցը պարտավոր է սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Տվյալ պարագայում «Արքասիմ» ՍՊԸ-ն ներկայացնելով հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտ, Պատվիրատուի կողմից հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամանակահատվածում, չշտկելով արձանագրված անհամապատասխանությունները, այն է՝ վերջինիս կողմից որպես անհամապատասխանության շտկում ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում չի լրացվել Հրավերով առկա «Սարքավորումներ-0.1198%» տողը, ինչի արդյունքում «Արքասիմ» ՍՊԸ-ի կողմից խախտվել է Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջները:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ պայմանագրի գնման առարկայի բնութագրերի, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջների մասով բողոք կարող է ներկայացվել մինչև հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետը, ուստի և Բողոքներ քննող անձի քննությանը ենթակա են միայն այն բողոքները, որոնք ներկայացվում են մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, Պատվիրատուի կողմից հայտարարված «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/89» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով սահմանված 4-րդ չափաբաժնի համաձայն՝ մասնակիցները ծավալաթերթ-նախահաշվում պետք է նաև լրացնեն «Սարքավորումներ-0.1198%» տողը:

Վերոգրյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Արքասիմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքով բերված փաստերը վերաբերում են ծավալաթերթ-նախահաշվում առկա «Սարքավորումներ-0.1198%» տողին, որի դեպքում բողոքը՝ այդ հանգամանքի վիճարկման մասով, անհրաժեշտ էր ներկայացնել Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետների պահպանմամբ, քանի որ այդ հանգամանքները վերաբերում են ընթացակարգի հրավերով և նույն հրավերի ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված պայմաններին, որպիսի պարագայում վերջինս բողոք պետք է ներկայացներ մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ «Արքասիմ» ՍՊԸ-ն հայտով ներկայացրած ծավալաթերթ-նախահաշվից չի հեռացրել «Սարքավորումներ-0.1198%» տողը, իսկ արդեն որպես արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացրած ծավալաթերթ-նախահաշվից «Սարքավորումներ-0.1198%» տողը Ընկերության կողմից հեռացվել է:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, գնահատելով ու հետազոտելով գործում առկա ապացույցները, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արքասիմ» ՍՊԸ-ն ներկայացնելով հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտ, Պատվիրատուի կողմից հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամանակահատվածում, չշտկելով արձանագրված անհամապատասխանությունները, այն է՝ վերջինիս կողմից որպես անհամապատասխանության շտկում ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում չի լրացվել Հրավերով առկա «Սարքավորումներ-0.1198%» տողը, ինչի արդյունքում Պատվիրատուն, մերժելով մասնակցի հայտը, գործել է իրավաչափ՝

պահպանելով Օրենքի 34-րդ հոդվածով և Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջները, ուստի այս պարագայում «Արքասիմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Արքասիմ» ՍՊԸ-ի կողմից 07.07.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/80 ծածկագրով բողոքը մերժել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**